ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26-ը դեկտեմբեր 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ, Վ. Մելքոնյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Ա/Ձ Գարեգին Կիզերյան Նշանի կողմից գնման պայմանագիրը չկնքելու վերաբերյալ.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.Ա/Ձ Գարեգին Կիզերյան Նշանի կողմից գնման պայմանագիրը չկնքելու վերաբերյալ

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված **«Գրասենյակային գույքի, և կենցաղային կահույքի, սարքավորումների» գնման** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էր ներկայացրել Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև ընտրված /հաղթող/ մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ **11.12.2019թ.-ին** մասնակցին պատշաճ ծանուցվել էր կնքվելիք պայմանագրի նախագիծը, միաժամանակ ծանուցմամբ տեղեկացվել էր, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչություն՝ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010-66-24-94: Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մաղաքյանին: **26.12.2019թ.** գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չներկայացավ պայմանագիր կնքելու և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.5 կետը՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից*** գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 73-րդ չափաբաժնի մասով մերժել Գարեգին Կիզերյան Նշանի Ա/Ձ-ի հայտը:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ **Ա/Ձ Գարեգին Կիզերյան Նշանի** տվյալները ուղարկել լիազորված մարմին:

1.3 Քանի որ Ա/Ձ Գարեգին Կիզերյան Նշանի կողմից պայմանագիր չկնքվեց, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետը՝ որոշեց, գնման ընթացակարգի 73-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակցին՝ Ա/Ձ Աննա Սահակյանին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, քանի որ Ա/Ձ Աննա Սահակյանի մասով սույն ընթացակարգի շրջանակներում արդեն իսկ հարցում կատարվել էր:

Ջ. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Ա/Ձ Աննա Սահակյանի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Վ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Մաղաքյան